

Արձանագրություն թիվ 4

26 նոյեմբերի 2016թ.

ք.Իջևան

Նախագահ՝ Ա.Շ.Մարգարյան

Քարտուղար՝ Ք.Հ.Մխիթարյան

Նիստին մասնակցում էին խորհրդի 10 անդամներ: Հրավիրվել էին նաև ամբիոնների դասախոսներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2016-17 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ ստուգումների և քննությունների արդյունքների ամփոփում:
2. Առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ ստուգումների և քննությունների ժամանակացույցի քննարկում և հաստատում:
3. 2016-17 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցի քննարկում և հաստատում:
4. Ընթացիկ հարցեր:

- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը: Նա ներկայացրեց 2016-17 թթ. ուստարվա I ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքները /ամփոփ տվյալները կցվում են արձանագրության տեքստին/: Զեկուցողը անդրադարձավ նաև այն առարկաներին, որոնց միջին առաջադիմությունը ցածր է ֆակուլտետային միջին ցուցանիշից, ինչպես նաև այն առարկաներին, որոնց միջին առաջադիմությունը շատ բարձր է վերջինից: Ա.Շ.Մարգարյանը հանձնարարեց, ամբիոններին պարզելու այդ ծայրահեղությունների պատճառը և ընթացիկ քննությունների ու ընթացիկ ստուգումների ժամանակ բացառել թերացումները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - „Դիզայն” մասնագիտության պատասխանատու Ա. Չիբուխչյանը նշեց, որ կազմակերպվում են լրացուցիչ պարապմունքներ՝ առաջադիմության միջին ցուցանիշը բարձրացնելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ - 1. Հանձնարարել ամբիոններին հատուկ ուշադրություն դարձնել տեսական և գործնական նյութի՝ մատուցման որակի ու դասավանդման մեթոդներին երկրորդ ընթացիկ քննություններին և ստուգումներին բարձր արդյունք ապահովելու համար:

2. Հանձնարարել ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմին ներկայացնել առաջարկներ երկրորդ ընթացիկ քննությունների անցկացման ձևի (գրավոր, բանավոր կամ թեստի հետ համակցված տեսական նյութեր) վերաբերյալ:

Օրակարգի երկրորդ հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:Նա ըստ մասնագիտությունների ներկայացրեց 2016-17թթ. ուստարվա I կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը և նշեց , որ վերջինս քննարկվել է նաև դեկանատի նիստում: Անցկացվեց ընդանուր քննարկում և առաջարկվեց հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ - 2016-17թթ. ուստարվա I կիսամյակի II ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը ներկայացնել ուսումնամեթոդական վարչություն՝ հաստատելու այն:

Օրակարգի երրորդ հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը և ըստ մասնագիտությունների ներկայացրեց 2016-17թթ. ուստարվա առաջին կիսամյակի ստուգարքային շրջանի, քննաշրջանի և կոնսուլտացիաների ժամանակացույցը՝ 14.12.2016թ.-25.01.2017թ., որը կազմվել է համաձայն ուսումնական պլանի: Նա ընգծեց, որ հարցը համապատասխան ամբիոնների նիստերում մանրամասնորեն քննարկվել և որոշվել է եզրափակիչ և առանց եզրափակիչ գնահատմամբ յուրաքանչյուր առարկայի քննությունների և ստուգարքների անցկացման ձևը(գրավոր, բանավոր,թեստային) և հարցատոմսի նմուշները:

Զեկուցողը հանձնարարեց ամբիոնների դասախոսներին քննաշրջանը կազմակերպել ըստ հաստատված ժամանակացույցի, իսկ դեկանատին՝ սահմանել հսկողություն քննաշրջանը անցկացնել համաձայն համապատասխան կարգի:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Ասատրյանը,Մ.Հարությունյանը,Ա.Զիբուխյանը: Նրանք համակարծիք էին ներկայացված նյութին և առաջարկեցին հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ներկայացնել ուսումնամեթոդական վարչություն 2016-17թթ. ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի գրաֆիկը:

Օրակարգի չորրորդ հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը: Նա ներկայացրեց ֆակուլտետի որոշ կարգապահական հարցեր, ուսանողների դասերին հաճախումների արդյունքները: Նա ներկայացրեց այն ուսանողներին, որոնք ունեն 30-ից ավելի անհարգելի բացականեր և դեկանատի կողմից ստացել են նկատողություն , այն ուսանողներին, որոնք ունեն 60-ից ավելի անհարգելի բացականեր և ներկայացվել են տնօրենի կողմից խիստ նկատողություն ստանալու, և նաև այն ուսանողներին ,որոնք ուսումնական պարապմունքներից ունեն 90 և ավելի ժամ

անհարգելի բացակայություն , հետևաբար ենթակա են հեռացման:Մարգարյանը մտահոգություն արտահայտեց այն մասին, որ նշված ուսանողները „Կիրառական արվեստ,, երկրորդ, երրորդ և չորրորդ կուրսի ուսանողներ են:

Ձեկուցողը հանձնարարեց մասնագիտության պատասխանատու Ա.Զիբուխյանին հետևել վերոնշյալ ուսանողներին կարգապահությանը և տանել բացատրական աշխատանքներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Հ.Ասատրյանը, Ա.Զիբուխյանը, Դ.Զիբուխյանը և Ս.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ –Դեկանատը՝ մասնագիտության պատասխանատուի հետ համատեղ դեկտեմբեր ամսվա ընթացքում ուշադրություն դարձնեն հատկապես նշված ուսանողների հաճախումներին և կարգապահական հարցերին:

ՆԱԽԱԳԱՀ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ա. Շ.Մարգարյան

Ք.Հ.Մխիթարյան